

ՍՅՈՒՆԻԱՍ ԱՇԽԱՐՀ

Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ԵՐԿՐՈՒՄ
12 ՄԱՐՏԻ 2012

№ 5 (246)

www.syuniacyerkir.am

Օ փե՛ մայրա, օ մո՛ ռես,
Օ Զանգեզուր, օ Գո՛ ռիս...
ԵՂԻՇԵ ԶՐԵՆՏ



Հարթաշենի-փյունակարգ դպրոցը:

Ֆոտոգրաֆիա՝ Կ. Գրիգորյան

Մեղրիում իրավիճակ է փոխվում

ՍՅՈՒՆԻԱՍՆ ՕՐԱԿԱՐԳ

Մեղրի գետի ջրային ռեսուրսի վերաբաշխման շուրջ քննարկումները 2011թ. այդ շրջանում, հատկապես Մեղրի քաղաքում, լուրջ անհանգստություն էին առաջացրել: Մոտ 1000 հոգու ստորագրությամբ երկրի ղեկավարներին հղած դիմումին այդպես էլ պատշաճ պատասխան չի տրվել: Մի շարք գերատեսչությունների իրարանցիկ արձագանքները միայն խտացրել են անորոշության մշուշն այդ հարցում: Այդուհանդերձ, ըստ հանրապետության ֆինանսների նախարարի, ով ս.թ. մարտի 2-4-ն ուղեկցում էր Սյունիք այցելած վարչապետ Տիգրան Սարգսյանին, արաքսամերձ գյուղերի ջրամատակարարման ծրագիրը հաստատված է եւ կմեկնարկի ընթացիկ զարմանը, թեև հարյուրավոր մեղրեցիներ դեմ են դրան: Դա Համաշխարհային բանկի եւ Հայաստանի կառավարության համատեղ ծրագիրն է, ըստ որի լինելու է ինքնահոս ջրանցք եւ էականորեն բարելավվելու է այդ գյուղերի ջրամատակարարումը:

ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի N5-Ն որոշմամբ Տաշտուճի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ 0.75հա հող փոխադրվել է ենթագետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր հեկտերի եւ օժանդակ կառույցների շինարարության համար:

Հայաստանի կառավարությունը ս.թ. մարտի 1-ին Մեղրում առնչվող եւս մեկ որոշում է ընդունել, ըստ որի նորից է այնտեղ հողերի նպատակային նշանակություն փոխվել: Որոշմամբ Լիճք գյուղական համայնքի 0.425հա հողեր փոխադրվում են ենթագետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր հեկտերի եւ օժանդակ կառույցների շինարարության համար: Դրա մեջ մտնում են եւ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողեր, եւ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր: Երկու հեկտար կառուցման համար այդ հողամասերի հատկացմանը, ըստ «Էկոլոյրի» տարածած տեղեկատվության (28.02.2012թ.), դեմ են արտահայտվել եւ գյուղնախարարությունը, եւ բնապահպանության նախարարությունը: Լիճքի անտառապետությունը գտնվում է «Արեւիք» ազգային պարկի տարածքում, իսկ ազգային պարկի տարածքում փոքր հեկտերի կառուցումը, ըստ փորձագետների, հակասում է «Արեւիք» ազգային պարկի ստեղծման մասին ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի N1209-Ն որոշմանը:

Հայտնի է դարձել նաեւ, որ Մեղրի համայնքի ավագանին 2011թ. հունիսի 9-ին N41-Ա որոշմամբ Մեղրի քաղաքի արդյունաբերական, ընդերքօգտագործման նշանակության 47.9հա հողամասը, տարեկան 2.9 մլն դրամ վարձավճարով, 40 տարի ժամկետով հատկացրել է «Ազարակի ՊՍԿ» ՓԲԸ-ին՝ արդյունաբերական գործու-

Շարունակությունը՝ էջ 2

Հարթաշենի պղծված գարունը

Անառակություն, մանկապղծություն, թե՛ խնամքով ծրագրված դավադրություն

ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Այս հարցերի պատասխանը նախելառաջ պետք է տան Գորիսի քննչական մարմինն ու դատաբժշկական ատյանը: Եվ երկու այդ մարմնի պաշտոնյաներից ոչ սովորական ջանք է պահանջվում, որպեսզի քննության արդյունքը հանրային պատշաճ վստահության արժանանա: Վերջին տարիներին այդ կառույցներն այնքան են աղավաղվել մեր իրականությունը, որ մարդիկ դրանց չհավատալու բոլոր հիմքերն ունեն: Այո, խոսքը նաեւ դատական բժշկությանն է վերա-

բերում, որը ոչ միայն Գորիսում, այլեւ ամբողջ Սյունիքում մի տեսակ փակ ու խորհրդավոր գոտի է դարձել, թեև Սիսիանի դատական բժշկի՝ երկու-երեք տարի առաջ թույլ տված կեղծարարությունն ու դրան հաջորդած իրադարձությունները դեռ թարմ են մարդկանց հիշողության մեջ:

Մինչ այդ Հարթաշենում շարունակում է իշխել անորոշության, անհուսության, հիասթափության, պարտված լինելու, փոխադարձ մեղադրանքների մթնոլորտը: Եվ դա բնական է, քանի որ տեղի է ունեցել ճակատագրի, սոսկակի, աներեւակայելի մի իրադարձություն: Իշխանությունները,

դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, ծնողները, ըստ էության, շատ ջանք պիտի գործադրեն, որպեսզի գյուղը եւ մանավանդ դպրոցը դուրս գան կաթվածահար այս կացությունից: Ուրեմնե՝ շատ կարեւոր է, թե տեղի ունեցածից ինչ դասեր կբաղենք բոլորս եւ յուրաքանչյուրս: Իսկ համարժեք դասեր, կարծեք, դեռ չենք առել, պատշաճ եզրակացությունների (բացի հուզական ելույթներից) դեռ չենք հանգել: Դպրոցում 13-14 տարեկան աղջկա ճակատագիր ենք թաղել, իսկ դպրոցի տնօրենը, ուսնասվարը, կազմարանակույությունը՝ էջ 5

Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է անվավեր ճանաչել կառավարության N627-Ն չարանենդ որոշումը

ՍՅՈՒՆԻԱՍՆ ԳՈՅԱԿՈՒԿ

Ս.թ. փետրվարի 27-ին խմբագրությունում ստացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ.Անդրեասյանի՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին հղած գրության պատճենը, որով առաջարկվում է՝ «Օրենքի ուժով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշումը»: Գրության մեջ կրկին քննարկվում են համվել բոլոր այն հակասությունները, որ կան կառավարության նշված որոշման ու ՀՀ սահմանադրության, ինչպես եւ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի միջև: Որքանով տեղյակ ենք, հանրապետության կառավարությունը դեռեւս չի արձագանքել ՀՀ մար-

դու իրավունքների պաշտպանի առաջարկությանը: Մարտի 3-ին Քաջարան քաղաք այցելած վարչապետի հետ գրույցի է բռնվել Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աթայանը: Վարչապետը, սակայն, հուսադրող խոսք չի ասել կառավարության որոշումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ: Դրանից հետո՝ ս.թ. մարտի 5-ին, Քաջարանի գյուղական համայնքի ղեկավար Ռաֆիկ Աթայանը բաց նամակ է հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Գյուղապետը սասնավորապես նշել է. «Գյուղի բնակիչները տպավորություն ունեն, որ կառավարությունը կիսաքայքայերով ու երեսուրթականությամբ ստեղծելով խուսափում է բուն խնդրից եւ մեր գլխի տակ փափուկ բարձրում, քանի դեռ նախընտրական շրջան ենք ապրում»:



Կարեն Անդրեասյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Բաց նամակի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրության պատճենները, ինչպես եւ Տիգրան Սարգսյանի ու Ռաֆիկ Աթայանի գրույցի շարադրանքը՝ 3-րդ եւ 7-րդ էջերում:

Շարունակությունը՝ էջ 2

Ռոմանս՝ անսեր

Չորսամյա բոյկոտից հետո Մաքսիմը սկսել է ելուճուտ անել Այունիքի մարզպետարան, ինչն արդարացնելու եւ հիմնավորելու համար մարտի 6-ին մարզ էր այցելել ՀՀԿ նախընտրական շտաբի ղեկավար Հովիկ Աբրահամյանը:

2012թ. ամենազավեշտ այլ թատրոնը Կապանում քննարկվող թիվ 1 հարցն է: Չնայած րեզի ունեցածի անհեթեթությանը, շարժերն են ողջունում Այունիքի մարզպետարանի եւ Քաջարանի կոմբինատի միջև սառը պատերազմի (թեկուզեւ ժամանակավոր) դադարեցումը, քանի որ մարզը մոտ չորս տարի բաժանված էր հակամարտող (եթե ոչ թշնամակալ) երկու ճամբարի:

Բանն այն է, սակայն, որ մարդիկ այդ մերձեցման մեջ անկեղծության նշույլ անգամ չեն տեսնում: Մերձեցումը, փաստորեն, տեղի է ունեցել վերին հրամանով ու հանգամանքների թելադրությամբ, ինչը բացառապես պայմանավորված է առաջիկա ընտրություններով: Հատկապես Մաքսիմի համար այդ մերձեցումը կենսական նշանակություն ունի, չէ՞ որ իր ունեցվածքը պահելու խնդիր ունի, ինչն առանց մարզպետարանի աջակցության հնարավոր չէ: Մերձեցման հարցում ոչ պակաս շահագրգիռ է Այունիքի մարզպետարանը, չէ՞ որ կոմբինատի տնօրենի բոխչաները՝ արծաթի տեսքով, շատ են պետք գալու առաջիկա խորհրդարանական ընտրություններին:

Մաքսիմ Հակոբյանի եւ Սուրեն



ՍՈՒՐԵՆ ԽԱԿՈԲՅԱՆ



ՀՈՎԻԿ ԱԲՐԱԽԱՄՅԱՆ



ՍԱՏՔՍԻ ՎԱԿՈԲՅԱՆ

Խաչատրյանի միջև դաշնության վերականգնումը միգրացիոն դրակառուցման անդրադառնալու կապանյան զարգացումներին, եթե այդ նպատակով մարտի 6-ին Այունիք չժամաներ ՀՀԿ նախընտրական շտաբի պետ, ՀՀ ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանը, ով 2008թ. մեծագույն ջանք գործադրեց նրանց միջև պատերազմ բորբոքելու համար, ով այդ կոնկրետ պատրվակ դարձրեց եւ մի քանի անգամ Մաքսիմի վզին փողա-

յին պարտավորություններ դրեց: Անկեղծ լինեմք, Հովիկ Աբրահամյանի օրն էլ օր չէ: Մի անգամ ուղարկում են կոմբինատի ու մարզպետարանի միջև կոնկրետ, հաջորդ անգամ էլ ուղարկում են նրանց հաշտեցնելու համար... Տա՛ Աստված, որ կոմբինատ-մարզպետարան խաղաղությունն այս անգամ գոնե տեսական լինի: Տեղացիների մեծ մասի կարծիքով, մինչդեռ, ընտրություններից

հետո Կապանի երկնակամարում կրկին կերեւա հայտնի ուղղաթիռը, որի արդյունքում մոտ պատերազմ կբորբոքվի կոմբինատի ու մարզպետարանի միջև: Եթե դրա համար պատճառներ չգտնվեն, ապա պատճառներ կհորինվեն մեր երկրի քաղաքական վերնախավում: Այնտեղ՝ վերելում, մույնպես մեղավոր չեն, չէ՞ որ առայժմ Այունիքը կառավարելու այլ ձեւ գտնված չէ:

ՍԱՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրիում իրավիճակ է փոխվում

ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ
Սկզբը՝ էջ 1

նեություն իրականացնելու նպատակով: Այդ հարցը Մեղրու ավազանին քննարկել էր ավելի վաղ՝ մայիսի 20-ին եւ հատկացրել մոտ 42հա հողամաս: Նոր որոշմամբ (9 հունիսի 2011թ.), փաստորեն, վերանայվել է նախկին որոշումը եւ ավելացվել հատկացվող հողի չափը: Մեղրի քաղաքի Փոքր թաղից ուղիղ գծով մոտ 1կմ հեռավորության վրա գտնվող այդ հողատարածքում կկառուցվի պղծամբար:

Փաստաթուղթը, որի տակ համայնքի ղեկավար Սերգեյ Հայրապետյանից բացի ստորագրել են ավազանու անդամներ Մակար Բեգլարյանը, Սերգո Գալստյանը, Արմեն Զաքարյանը, Մակիչ Թումանյանը, Անաստաս Խաչատրյանը, Մուրադիկ Խաչատրյանը, Համիկ Հարությունյանը, Հարություն Քարամյանը, մինչեւ վերջերս հայտնի չէր համայնքի բնակչությանը:

Մեղրիում լուրջ անհանգստության տեղիք է տվել «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգը»: Ըստ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի՝ արդեն պատրաստ է Այունիքի մարզի համայնքների խոշորացման տարբերակը: Այդ փաստի շուրջ Մեղրիում թեւածող խոսակցությունների համաձայն Մեղրու շրջանում բազմաթիվ համայնքներ կզրկվեն ինքնուրույն վարչական միավոր լինելու կարգավիճակից, ինչը լուրջ մարտահրավեր է այդ գյուղերի գոյատևմանը: Խնդիրն այն է, սակայն, որ կառավարության պատասխանա-

տուներն առայժմ չեն ուզում բացել փակագիծը եւ ասել, թե Մեղրիում համայնքների խոշորացման ինչ մոդել է կիրառվելու:

Դեռեւ ս.թ. հունվարին այդ հարցով Մեղրիում ստորագրահավաք էր, բայց տեղական իշխանությունները խոստացան Մեղրու համայնքների խոշորացման մոդելը ներկայացնել հանրային քննարկման, ինչի համար մի խումբ մեղրեցիների ստորագրած դիմումը նույնպես վարչապետ Տիգրան Սարգսյանին: Սակայն այդ խոստումը չկատարվեց, եւ հարցը շարունակում է մնալ առկախ: Իսկ դիմումի մեջ մեղրեցիները գրել էին. «Հաշվի առնելով շրջանի բացառիկ ռազմավարական դիրքը եւ պատմական դառը փորձը՝ առաջարկում ենք Մեղրու տարածքում ձեռնարկվող կառավարության մշակած հայեցակարգի կիրառումից, քանի դեռ խնդրո առարկայի շուրջ հանրային քննարկում տեղի չի ունեցել մեզանում: Կարելու էր համարում ասել, որ շրջանի համայնքները, որքան էլ փոքրաթիվ բնակչություն ունեն, կանգուն են եւ շատ թե քիչ կենսունակ տեղական իշխանության շնորհիվ, ինչը նաեւ աշխատատեղեր է ենթադրում ու մարդկանց ամենօրյա հարցերի մի մասի լուծում: 20-րդ դարում, նաեւ խորհրդային տարիներին, Մեղրու շրջանում իրականացված սխալ քաղաքականության շնորհիվ մոտ 20 գյուղ է վերացել: Համայնքները միավորել՝ նշանակում է այդ սխալը որբորդ անգամ կրկնել: Միաժամանակ՝ Մեղրու գրեթե բոլոր գյուղերը սահմանային են: Միացնել դրանք այլ համայնքների (թեկուզեւ իրար մոտ գտնվող)՝ նշանակում է ուղղակիորեն ջլատել-թուլացնել սահմանը, մնացած բնակչությանը



2011թ. աշնանը Մեղրիում ցորենահարվեց արքայանարինջը:

ժամանակի ընթացքում, ինքնուրույնության, հետ քաշել սահմանից: Որեւէ գյուղից ներկայիս կարգավիճակը խելուց, որեւէ գյուղի հերթական անգամ ամլության մղելուց առաջ պետք է շատ լուրջ մտածել, այնպես մոտ գյուղեր կկորցնենք Մեղրու շրջանում»: Մեղրու բնակիչների կարծիքով ամենատարօրինակն այն է, որ շրջանում կատարվող սկզբունքային այս փոփոխությունների շուրջ տեղի բնակիչների մոտեցումը հաշվի չեն առնում: Հատկապես բնապահպանության ոլորտում կատարվող

էական տեղաշարժերը (առանց այդ էլ բնապահպանական իրավիճակը շատ մտահոգիչ է Մեղրիում), ըստ մեղրեցիների՝ արդեն իսկ շատ թանկ է մտտում բնակչության վրա: Մեղրի քաղաքի մի բնակչի դիպուկ արտահայտությամբ՝ այսօր արդեն Մեղրիում չես գտնի ընտանիք, որտեղ առնվազն մեկ հիվանդ չլինի: Եվ այդ ամենը՝ բնապահպանական հանցավոր քաղաքականության հետևանքով, որը կարծես, մոտ թափ է առնում:

ՍԱՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լուրեր

Այունիքում մարտի 8-ին մեկնարկած տոնական միջոցառումները կշարունակվեն մինչեւ ապրիլի 7-ը: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, նախօրեին մեծարժան միջոցառումներ են անցկացվել Կապանում եւ Քաջարանում, իսկ մարտի 9-ին՝ Գորիսում: Այունիքի մարզպետը Մարտի 8-ի առթիվ ուղերձ է հղել Այունիքի բոլոր կանանց ու աղջիկներին: «Պուր միշտ ուժ ու եռանդ եք հաղորդել մեզ, ոգեշնչել ու մղել եք մեր ձեռնարկումների, միշտ եղել եք հայոց օջախները շեն պահող ու պահպանող: Վատահ եմ, որ հայապահպան ու ազգապահպան այդ առաքելությունը հայ կանայք այսօր էլ շարունակում են, ինչը նաեւ երաշխիք է մեր հարատւման: Չեզանով են պահպանվում մեր դարավոր ավանդույթները: Ձեր ձեռնարկումներ, սիրո ու սոված դաստիարակության արդյունքում է դարձրի վեր ձեւավորվել մեր ազգային նկարագիրը», – ասված է մարզպետի ուղերձում:

2012թ. մարտի 2-4-ը վարչապետ Տ.Սարգսյանը մի խումբ նախարարների ուղեկցությամբ, կուսակցության նախընտրական ժրգորի քննարկման նպատակով, հանդիպումներ ունեցավ Մեղրու, Ագարակի, Քաջարանի, Կապանի, Գորիսի, Սիսիանի բնակիչների հետ: Հանդիպումներին մասնակցում էին ոչ միայն ՀՀԿ-ականներ, այլեւ բյուջետային հիմնարկների աշխատակիցներ, ովքեր հանդիսանում են այդ կուսակցության սոցիալական հետաքննարկման մարզում: Մարտի 3-ին՝ գորիսյան հանդիպման ժամանակ, Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը Այունիքի մարզի սոցիալ-տնտեսական, հոգեւոր-մշակութային բնագավառների զարգացման գործում ունեցած անձնական ակնառու ավանդի համար Տիգրան Սարգսյանին պարգևատրեց «Ավսել Բակունց» հուշանդամով, ինչն առանձին քննարկման նյութ է: Վարչապետի այցի որոշ մանրամասները թերթի սույն համարում:

2012թ. փետրվարի 26-ին երեւան քաղաքի «Հայրենիք» կինոթատրոնում տեղի ունեցավ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովի 27-րդ նիստը, որին մասնակցում էին կազմակերպության նախագահությունը, կազմակերպության նախագահության կողմից հիմնադրված 200 մասնաճյուղեր-գրասենյակների ղեկավարներ, հյուրեր: Կազմակերպության նախագահության առաջարկությամբ ՀՀ պաշտպանության նախարարության «Ծովակալ Իսակով» գերատեսչական մեդալով պարգևատրվեց կազմակերպության նախագահի խորհրդական, նախագահության անդամ Սիեր Եղիազարյանը:

ՀՊԵՀ Կապանի մասնաճյուղի նախկին տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Բալասանյանը նշանակվել է մույն մասնաճյուղի գիտության գծով փոխտնօրեն:

Այունիքի մարզի բոլոր քաղաքներում արդեն ձեւավորվել են ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական շտաբերը: Վերջին օրերին հաճախակիացել են այդ կուսակցությունների կենտրոնական մարմինների ներկայացուցիչների այցելությունները Այունիք մարզ:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ

Թագավորը մերկ է

Քաջարանյան մելոդրամա՝ երկու գործողությամբ

2012թ. մարտի 3-ին Քաջարան քաղաքում տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հանդիպումը քաջարանցիների հետ: Այնտեղ էին եկել նաև Քաջարան գյուղի բնակիչները՝ վարչապետին գյուղ հրավիրելու և իրենց մտահոգությունները դեմ առ դեմ քննարկելու համար: Սակայն բանը դրան չհասավ: Եվ գյուղապետ Ռաֆիկ Աթայանը ստիպված, բոլորի ներկայությամբ, հարցեր ուղղեց Տիգրան Սարգսյանին: Երկխոսության շարադրանքը՝ ստորև:

Գյուղապետ, – Պարոն վարչապետ, Դուք մտադիր չե՞ք վերացնել կառավարության չարաբաստիկ որոշումը Քաջարան գյուղի մասին:

Վարչապետ, – Մենք այդ հարցին պետք է տանք արդարացի լուծում: Հարգելի գործընկերներ, շատերն են տեղյակ, որ այս հարցը դարձել է ածիոտաժայիմ հարց: Բոլոր քաղաքական ուժերը, ՀՀ-ները, «Կանաչները» զբաղվում են դրանով, և այդ ամենն էական խոչընդոտում է հարցի արդարացի լուծմանը: Ինչո՞ւ, որովհետև հարցը դարձել է քաղաքական շահարկումների առարկա: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլինի, եթե հանրապետության 900-ից ավելի համայնքից յուրաքանչյուրն իր հարցերը լուծելու համար քաղաքական գործընթացներ սկսի: Ինչ վերաբերում է Քաջարան գյուղին, ապա, բնականաբար, կառավարությունը մանրակրկիտ ուսումնասիրել է հարցը, նաև հարցի պատմությունը: Բոլոր քաջատեղյակ ենք, որ հարցի պատմությունը սկսվել է դեռ Սովետական Միությունից՝ 1968-ից: Եվ այդ համայնքի տեղահանման հարցի վերաբերյալ կկայացնենք արդարացի որոշում, ընդ որում՝ չնեղացնելով այդտեղ ապրող բնակիչներին, տրամադրելով նրանց այնպիսի հատուցում, որ ոչ միայն բավարարի մարդկանց պահանջները, այլ ավելի լավ պայմաններ ստեղծի: Մենք ուզում ենք, որպեսզի հանրահունձային արդյունաբերությունը զարգանա և ունենա մեծ ու երկարաժամկետ հեռանկար, որով-

հետև Քաջարան գյուղի խնդիրն այսօրվա խնդիր չէ: Մենք կարող ենք այդ խնդրին անդրադառնալ նաև 15 տարի հետո: Առաջին հարցը հետևյալն է՝ արդյո՞ք մարզում հանրահունձային արդյունաբերությունը դիտարկում ենք որպես հեռանկարային ճյուղ և հրավիրո՞ւմ ենք արդյոք ներդրողների՝ միլիոնավոր դոլար ներդրումներ կատարել, ժամանակակից սարքավորումներ ներկրել, հազարավոր ընտանիքների ապահովել աշխատանքով, նպաստել մեր պետության զարգացմանը: Կառավարության պատասխանը միանշանակ է՝ այո: Մենք այդ ռազմավարությունը որդեգրել ենք և հետևողական կլինենք: Երկրորդ հարցը՝ արդյո՞ք մեր ուշադրության կենտրոնում կդրվեն նաև բնապահպանական խնդիրները: Դրա պատասխանը նույնպես դրական է՝ այո, որովհետև աշխարհի զարգացած երկրները նույնպես ունեն հանրահունձային արդյունաբերություն և կարողանում են բնապահպանական խնդիրները լուծել: Երրորդ խնդիրը՝ արդյո՞ք բնակիչները, ովքեր ապրում են տվյալ համայնքում, ստանալու են համապատասխան հատուցում և նրանց կենցաղային, տնտեսական խնդիրները լուծվելու են: Պատասխանը նույնպես դրական է՝ այո: Եթե կան որևէ չլուծված խնդիր, ապա կառավարությունը թույլ չի տա որևէ տեղահանում: Եթե մենք ունենանք որևէ դժգոհ քաղաքացի, ում տնտեսական և սոցիալական խնդիրները չեն լուծվել, ապա կհամարենք, որ այդ քաղաքացու իրավունքները ոտնահարվել են: Մենք կկայացնենք մեր պետության, մեր հասարակության շահերից բխող որոշում: Առաջին հերթին՝ մարզի բնակչության շահերից բխող որոշում: Հիմա լսենք Ձեզ՝ այս լուծումների մեջ ի՞նչը դուր չի գալիս:

Գյուղապետ, – Պարոն վարչապետ, Քաջարան գյուղը 17-րդ դարից է, ունի գերեզմանատուն, զոհվածների հուշարձան, եկեղեցի: Այսօր կոմբինատի հանքը գործում է և թող գործի, մենք բոլորս էլ այնտեղ աշխատել ենք, տեղյակ ենք, ամեն ինչ էլ գիտենք: Իսկ մեր գյուղը



3 մարտի 2012թ., Քաջարան:

թող մնա իր տեղում, գյուղացիներն էլ իրենց եղած-չեղածով յուր գնան: Մենք խնդրում ենք այդ չարաբաստիկ որոշումն անվավեր ճանաչել: Մնացածը թող մնա ապագա սերունդներին:

Վարչապետ, – Մեր որոշումները լինելու են այնպես, որ հաշվի են առնելու բնակիչների շահերը: Երկրորդ՝ ՀՀ կառավարությունը որևէ չարաբաստիկ որոշում չի կայացրել, այլ կան գործիչներ, ովքեր չարաբաստիկ գործողությունների են դիմում և չեն գիտակցում, որ իրականում այդ համայնքում ապրողների շահերը չեն հետապնդում: Եվ ես նշեցի՝ եթե համայնքը և համայնքի բնակիչները համաձայն չլինեն մեր որոշման հետ, ապա, բնականաբար, մենք չենք պատրաստվում որևէ քայլի: Ես համոզված եմ, որ հարցը կլուծվի համերաշխության մեթոդով: Եվ մեր որոշումները լինելու են այնպես, որ Ձեր համայնքի բնակչության մեծամասնությունը ողջունելու է մեր որոշումը: Եվ մենք ձեզ չենք պարտադրելու, դուք ձեր հոմար կամքով եք համաձայնվելու մեր որոշման հետ, որովհետև այդ որոշումը բխելու է համայնքի բնակիչների

շահերից: Դա լինելու է շահավետ և իրենց, և իրենց երեխաների ու հետագա սերունդների համար:

Մաքսիմ Հակոբյան, – Պարոն վարչապետ, ես նախօրոք գյուղապետին կանչել եմ ինձ մոտ և ասել՝ գրիր բոլոր գյուղացիների անունագգանունը՝ դիմացը նշելով, թե ինչպիսի փոխհատուցում են ուզում: Նույնիսկ մի քանի օր առաջ Կապանում տարածք էի փնտրում՝ փոքր համայնք կառուցելու և Քաջարան գյուղացիներին տրամադրելու համար:

Վարչապետ, – Հարգելի գործընկերներ, ձեր ներկայությամբ առաջարկում եմ, որ հարցին դնենք վերջավետ, այնպես այս հարցը չդարձնենք քաղաքական շահարկումների առարկա: Չի լինելու որևէ մի որոշում, որի արդյունքում կոտնահարվեն համայնքի բնակիչների շահերը: Սրանով այս հարցը համարում ենք փակված (նամանավանդ նախընտրական շրջան է սկսվում), որպեսզի թեման չդառնա քաղաքական շահարկումների առարկա:

Պարոն վարչապետ, հետո ներկայացրեց իրավիճակը «Ֆուրչետի» սեղանի մոտ: Ռաֆիկ Աթայանը,

սակայն, արդեն դուրս էր եկել «թեթևաստի»-ն, որտեղ կայացել էր հանդիպումը: Նրան է մոտեցել մի անձնավորություն և տեղեկացրել, թե վարչապետն իրեն է կանչում: Եվ Ռաֆիկ Աթայանը մոտեցել է Տիգրան Սարգսյանին:

Վարչապետ, – Ռաֆիկ ջան, չե՞ս ուզում ինձ հետ բաժակ խփել:

Գյուղապետ, – Ինչու չեմ ուզում:

Վարչապետ, – Ռաֆիկ ջան, քանի՞ ընտրող ունեք գյուղում:

Գյուղապետ, – 180 ընտրող:

Մաքսիմ Հակոբյան, – Սուտ է ասում, 167 ընտրող:

Գյուղապետ, – Դու տեղյակ չես, դու ես ստում:

Վարչապետ, – Քանի՞ ձեռք ես մեր կուսակցությանը տալու:

Գյուղապետ, – Չգիտեմ:

Վարչապետ, – Մի հատ ձեռք էլ չե՞ս տալու մեր կուսակցությանը:

Գյուղապետ, – Չգիտեմ:

Հ.Գ. Այս երկխոսությունից հետո Ռաֆիկ Աթայանը բաց նամակ է հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, որի տեքստը հրապարակվում է:

Սիսիան. մեծ ճակատամարտից առաջ

ՀՀ վարչապետը, բնականաբար, այնքան էլ հաճախակի չի այցելում մարզեր: Եվ վարչապետի այցի ժամանակ գրեթե ոչ ոք չի հիշում կամ չի ուզում մրաձել, թե նա որ մի կուսակցությունից է: Այդպես է լինում անգամ այն դեպքում, երբ վարչապետը մարզ է այցելում հարազատ կուսակցության նախընտրական ծրագիրը քննարկելու միսիայով:

Մարտի 3-4-ին Սյունիքում աշխատած Տիգրան Սարգսյանը, թեև կուսակցական առաքելությամբ էր մարզ այցելել, բայց հանդիպումներին մասնակից դարձրեց ոչ միայն ՀՀԿ-ականների՝ ակնկալելով դիտողություններ, լրացումներ, առաջարկություններ՝ ներկայացվող ծրագրի վերաբերյալ: Այդպես էր Մեղրիում ու Ազարակում, Քաջարանում ու Կապանում, Գորիսում ու Սիսիանում:

Սիսիանյան հանդիպումը, մինչդեռ, որ կայացավ մարտի 4-ին, մեկ առանձնահատկություն ուներ: Համդիպմանը չէր մասնակցում Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: Իսկապես, շատ տարօրինակ էր, հանրապետության վարչապետը Սիսիան է ժամանում, քաղաքի մշակույթի կենտրոնում հանդիպում համայնքի մոտ 300 բնակիչի հետ (ոչ միայն հանրապետականների), քննարկում Սիսիանի առնչվող հարցեր, բայց քաղաքապետը նրանց մեջ չի երևում: Մինչ այդ էլ քաղաքապետը քաղաք ժամկետով վարչապետին դիմավորողների մեջ չէր, հետո էլ, երբ վարչապետին հյուրասիրեցին «Կանթեղում», քաղաքապետը դարձյալ բացակա էր:

Աղասի Հակոբջանյանը ողջամտորեն արձագանքեց մեր զարմանքին՝ «Ինձ պաշտոնապես չեն հրավիրել, չեն իրագրել, ես էլ չեմ

մասնակցել, հո անկոչ հյուր չե՞մ»: Այդ ամենն արտառոց չէր համարվի, եթե... Վարչապետի և սիսիանցիների հանդիպման ժամանակ Տիգրան Սարգսյանին ուղղված հարցերի մեջ, այնուամենայնիվ, առանձնացավ երկու հարց, որոնք ուղղակիորեն առնչվում էին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի հետ: Հարցերից մեկը Մյասնիկյան փողոցի ասֆալտապատման էր առնչվում: Ինչո՞ւ է ասֆալտապատվել, բարեկարգվել այդ փողոցը, որի վրա է գտնվում Աղասի Հակոբջանյանի կառնձնատունը: Կարելի էր ավելի կարելու փողոցներ ասֆալտապատել-բարեկարգել: Վարչապետը չի հակադարձել՝ իսկ ինչո՞ւ չէր կարելի այդ փողոցը բարեկարգել: Ավելին՝ կառավարության ղեկավարը խոստացավ հարցն ուսումնասիրել, մասնավորապես հարցատուն պնդեց, թե «զույմարը տեղին չի օգտագործվել»:

Երկրորդ հարցը Շաքեի ջրվեժի մասին էր, որը, ջրային ռեսուրսները հեկի շահագործմանը ծառայեցնելու պատճառով (հեկի սեփականատերերից մեկը Աղասի Հակոբջանյանն է), գործում է հազվադեպ, ինչի արդյունքում քայքայվում-ոչնչանում է բնության այդ հրաշալիքը: Հարցատուն փորձեց վարչապետից ճշտել՝ ջրվեժն է կարելու, թե՞ այդ հեկի տված էլ էներգիան: Վարչապետը խոստացավ այդ հարցը նույնպես քննարկման առարկա դարձնել: Երկու դեպքում էլ վարչապետը չհարցրեց՝ իսկ ո՞ր է քաղաքապետը, որի մասին այդքան խոսում եք: Իհարկե, հնչեցին նաև այլ հարցեր, որոնց մեծ մասն անձնական էր ու անձնամանկ: Բայց ուշադրությունից դուրս մնացին սիսիանյան գլխավոր հարցերը՝ բնակչության զբաղվածությունը, քաղաքի փողոցների բարեկարգում, գյուղապահպանություն և այլն:

Բանն այն է, որ ԲՀԿ-ական Աղասի Հակոբջանյանի ուղղությամբ ՀՀԿ-ական հրետանին աշխատում

է ոչ այսօրվանից: Երկու-երեք ամիս առաջ, օրինակ, քրեական գործ է հարուցվել նրա տեղակալի դեմ, ինչի քննությունը դեռ շարունակվում է: Իսկ մի քանի օր առաջ, երբ Սիսիանում ստեղծվում էր ՀՀԿ-ի նախընտրական շտաբը, պարզորոշ հայտարարվեց, որ Աղասի Հակոբջանյանը Սիսիանի քաղաքապետի պաշտոնում չի կայացել... Սիսիանի քաղաքապետարանի շուրջ զարգացումները, սակայն, այնքան էլ չեն տեղավորվում կոալիցիոն եղբայրներ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի միջև վերջին շրջանում տեղի ունեցող սուտ պատերազմի տրամաբանության մեջ: Այս կռիվը ուրիշ կռիվ է: ՀՀԿ-ի տեղական լիդերները, ըստ էության, չեն մոռանում 2008-ին Աղասի Հակոբջանյանից կրած պարտությունը և ձգտում են ռեանշ վերցնել:

Ամենահետաքրքիրն այն է, սակայն, որ Սիսիանում ոչ միանշանակ է ընդունվում քաղաքապետի դեմ թեժացող պայքարը: Ոմանք նույնիսկ բարձր են գնահատում **Շարունակությունը՝ էջ 4**

ԱՅՈՒՆԻՅԵՅԱՆ ԳՈՅԱԿՈՒԿ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նամակը վարչապետ Տիգրան Սարգսյանին



Հարգելի պարոն Սարգսյան 2011թ. ապրիլի 28-ին կայացված ՀՀ կառավարության թիվ 627-Ն որոշման համաձայն՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչվեցին Սյունիքի մարզի սահմանամերձ Քաջարան եւ Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի շրջակա եւս 4՝ Արծվանիկ, Սեւաքար, Աճանան եւ Չափնի գյուղերի գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը (շուրջ 600հա), որոնք վարձակալության իրավունքով պետք է տրվեն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ բաց հանքի շահագործման եւ թունավոր թափոնների գերեզմանոցների տեղադրման համար:

անշարժ գույք: Քաջարան գյուղի գյուղապետ Ռաֆայել Աթայանի հավաստմամբ՝ 123 անշարժ գույքի միավորներից շուրջ 70-ը գտնվում է հանրային գերակա շահ ճանաչված գոտում:

1. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկվում է օտարվող սեփականության սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց»: Կառավարության հիշյալ որոշմամբ օտարվող սեփականության սեփականատիրոջը եւ օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց հարգանքները եւ օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց իրազեկման ապահովման պարտականությունը դրված է Սյունիքի մարզպետի վրա: Պաշտպանի հարցմանն ի պատասխան Սյունիքի մարզպետը հայտնել է, որ Քաջարան, Աճանան եւ Սյունիք գյուղական համայնքների գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասեր չկան: Քաջարանի գյուղապետին ուղարկված հարցմանն ի պատասխան՝ Պաշտպանին է ներկայացվել տեղեկանք ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման կողմից, որտեղ նշված է, որ «Սյունիքի մարզի գյուղ Քաջարանում ԱԳԿՊԿ աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանման կողմից սեփականության իրավունքով գրանցվել է 123 միավոր անշարժ գույք, իսկ վարձակալության իրավունքով՝ 5 միավոր

2. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Ձեռքբերողը պարտավոր է մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնական ժամկետից օտարվող սեփականության սեփականատերերին եւ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկել սեփականության օտարման պայմանագրի նախագիծը»: «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե ձեռքբերողը սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը եւ գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը, կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում ղեպդիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված ժամկետում ղեպդիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, եւ տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր»: Նշենք, որ ՀՀ կառավարության 627-Ն որոշմամբ սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ էր սահմանվել 2012 թվականի հունվարի 1-ը: ՀՀ ենթագետիկայի եւ բնական պաշարների նախարարության կողմից մշակվել է ներկայումս շրջանառության

մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N627-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «հունվարի» բառը փոխարինել «ապրիլի» բառով, այսինքն գործընթացը սկսելու ժամկետ սահմանել 2012թ. ապրիլի 1-ը, իսկ 4-րդ կետի 4-րդ ենթակետում «3-ամսյա» բառը փոխարինել «9-ամսյա» բառով:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել հայեցակարգի եւ նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական եւ սոցիալական բնականոն զարգացման վրա»: Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնելու համար համապատասխան տարածքները բացառիկ հանրային գերակա շահ ճանաչելու փուլում «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքը սահմանում է, որ մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման ընդունումը ձեռքբերողը իրավունք ունի կառավարության առաջարկություն ներկայացնելու օտարման ենթակա սեփականության ուսումնասիրման մասին, սակայն այդպիսի ուսումնասիրություն անցկացնելու պարտավորություն չի սահմանվում օրենքով:

Այդուհանդերձ, նշված օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում են հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, մասնավորապես՝ հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, գերակա հանրային շահից ելնելով սեփականության օտարումը չպետք է չիմնափորված վնաս պատճառի սեփականատիրոջը: Հանրային գերակա շահ ճանաչելու փուլում այս սկզբունքների պահպանումը թերեւս դրվում է կասկածի տակ այն իմաստով, որ քանի որ չի կատարվում ուսումնասիրություն մինչև հանրային գերակա շահի ճանաչումը, հնարավոր չէ փաստել, որ հանրային շահը գերակա է օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից կամ սեփականության օտարումը չիմնափորված վնաս չի պատճառի սեփականատիրոջը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք՝

- 1. համապատասխան մարմիններից պարզել՝ կան արդյոք Քաջարան համայնքի գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքացիներին վարձակալության կամ սեփականության իրավունքով պատկանող հողամասեր,
- 2. օրենքի ուժով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 627-Ն որոշումը՝ չկատարելով նախատեսվող փոփոխությունները,
- 3. ինչպես այս, այնպես էլ նմանատիպ այլ դեպքերում հնարավորինս ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը մինչև հողատարածքի նկատմամբ բացառիկ հանրային գերակա շահի ճանաչումը:

Հարգանքով՝ ԿԱՐԵՆ ԱՆԿՐԵԱՅԱՆ

Ծանոթություն Ա.թ. փետրվարի 27-ին խմբագրությունում ստացված սույն մասնակի պատճենի վրա բացակայում են հերթական համարը եւ ժամկետը:

Կառավարությունը՝ հոգուր Քաջարանի հանքավայրի շահագործման

Էկոլոգիական հասարակական դաշինքը ստացել է Հայաստանի բարձրագույն իշխանությանն ուղղված հայտարարության պատասխանը: Դաշինքն իր հայտարարությամբ կոչ էր անում անվավեր ճանաչել 2011թ. ապրիլի 28-ի ՀՀ կառավարության 627-Ն որոշումը, որով Սյունիքի մարզի 6 համայնքի հողերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ այդ հողերը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից օգտագործվելու նպատակով: Գյուղերից մեկը՝ Քաջարանը, որից վերցնում են 181,7 հա հող, հանդես է եկել որոշման դեմ:

Պատասխան մամուլը ստորագրված է ՀՀ ենթագետիկայի եւ բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից:

Նամակում նշված է. «Ձեր կողմից ՀՀ նախագահին ուղղված դեմադրանքի 26-ի գրության վերաբերյալ հայտնում են, որ Հայաստանի կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի, Արծվանիկի, Սեւաքարի, Աճանանի, Չափնիի եւ Սյունիքի համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N627-Ն որոշումն ընդունվել է «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ինչը հանդիսանում է տվյալ ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը: Նշված օրենքն ազդեցության զնախատման, մասնագիտական հիմնավորումների եւ փորձագիտական եզրակացությունների անցկացման, հասարակության մասնակցության պահանջ չի սահմանում: Վերոնշյալ որոշմամբ կարգավորվել են միայն որոշ տարածքներում համայնքի, քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին հարցերը:

Գրության մեջ նշված հողերի՝ գերակա հանրային շահ ճանաչելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարեւոր նշանակություն, ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի եւ արտահանման ամրապնդմանը, խթան կհանդիսանա տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար, որի մասին է վկայում 2006թ. «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմված կոմբինատի ընդլայնման՝ հանքաքարի տարեկան արտադրողականությունը մինչև 12,5 մլն տոննա հասցնելու, բացահանքային տնտեսության աշխատանքային

նախագիծը: Կցանկանալի տեղեկացնել, որ ներկայումս ընթանում են համատեղ քննարկումներ ՀՀ ենթագետիկայի եւ բնական պաշարների նախարարության եւ ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչների, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան գյուղական համայնքի ղեկավարի հետ, վերջիններիս կողմից բարձրացված՝ Քաջարան գյուղին առնչվող հարցադրումների վերաբերյալ:

Մեր կողմից նշենք, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի կողմից ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ուղղված նամակում հղում է արվում միեւնույն «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասին, որում նշված է. «Եթե ձեռքբերողը սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում օտարվող սեփականության սեփականատիրոջը եւ գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում ղեպդիտ հաշվին չի հանձնում փոխհատուցման գումարը կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում չի դիմում դատարան սեփականության օտարման հայցով կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված ժամկետում ղեպդիտ հաշվին չի փոխանցում դատարանի կողմից սահմանված փոխհատուցման լրացուցիչ գումարը, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելուց, եւ տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր»:

Սեփականության օտարման գործընթացը ղեռնա է իրականացվել, իսկ այն սկսելու վերջնական ժամկետն ավարտվել է այն սահմանված էր մինչև 2012թ. հունվարի 1-ը: Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի նամակից տեղեկանում ենք, որ ՀՀ ենթագետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը մշակել է ներկայումս շրջանառության մեջ է դրել «Հայաստանի կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 627-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ, որով առաջարկվում է որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «հունվարի» բառը փոխարինել «ապրիլի» բառով, այսինքն գործընթացը սկսելու ժամկետ սահմանել 2012թ. ապրիլի 1-ը, իսկ 4-րդ կետի 4-րդ ենթակետում «3-ամսյա» բառը փոխարինել «9-ամսյա» բառով: Հիշեցնենք, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ կառավարությունից խնդրում է անվավեր ճանաչել 627-Ն որոշումը՝ չկատարելով նախատեսվող փոփոխությունները: **2 մարտի 2012թ.**

ԱՅՈՒՆԻՔՅԱՆ ԳՈՅԱԿՈՒԿ

Քաջարանի գյուղապետի բաց նամակը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին

Սեծարգո՛ պարոն նախագահ Քաջարան գյուղական համայնքի բնակիչների հանձնարարությամբ կրկին դիմում եմ Ձեզ: Խոսքը ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշման մասին է, ըստ որի Սյունիքի մարզի մի քանի գյուղի, այդ թվում՝ Քաջարանի գյուղատնտեսական նշանակության հողերը պետք է տրվեն Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ բաց հանքի շահագործման եւ թունավոր թափոնների գործող գերեզմանոցների ընդլայնման համար:

Վերստին տեղյակ եմ պահում Ձեզ, որ կառավարությունը նշված որոշումն ընդունելուց առաջ չի խորհրդակցել համայնքի բնակիչների հետ, համայնքի բնակչության մասնակից չի դարձրել այդ որոշման պատրաստմանը: Որոշման մասին իմացել ենք այն ընդունելուց հետո՝ պատահաբար: Տեղյակ չենք նույնիսկ, թե որոշումը նախապատրաստելիս ինչ փորձաքննություններ են իրականացվել (թե, իհարկե, իրականացվել են) գյուղի տարածքում՝ համայնքի բնակչության առողջության, շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցությունը ճշտելու վերաբերյալ:

Կառավարության որոշման մեջ եւ որոշման շուրջ կառավարության պատասխանատուների մեկնաբանություններում հետեւողականորեն աղավաղվել ու կեղծվել է հանրային գերակա շահ սավածը: Ավելի ճիշտ՝ կառավարության որոշման հիմնավորումներն ակնհայտորեն չեն համապատասխանում ՀՀ սահմանադրության պահանջներին, ինչպես եւ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքին, ինչը, կարծում եմ, Ձեզ պետք է լրջորեն մտախոհ: ՀՀ սահմանադրությունը եւ նշված օրենքը թույլ են տալիս հայտարարել երիցս՝ Քաջարան գյուղում գերակա հանրային, ազգային, պետական մեկ շահ կարող է լինել ու կա: Դա սահմանային Քաջարան գյուղի լինելու պայմանով:

Գյուղացիներիս շատ զարմացում է մեկ հանգամանք եւս: Ջանգեզուրի պղնձամոլիբդենային տնօրենը լրատվամիջոցների ու մարդկանց հետ շփումներում պարտադիր վկայակոչում է Ձեր անունը: Օրինակը՝ տարեսկզբին «Առավոտին» տված հարցազրույցների շարքը: Մի՞թե որեւէ ձեռնարկության տնօրեն իրավունք ունի սեփական մտածումներին ու ամբիցիաներին շունչ տալու համար անընդհատ վկայակոչել երկրի նախագահի անունը:

Մաքսիմ Հակոբյանը, խոսելով մեր գյուղի տարածքների մասին, հայտարարում է՝ «... Հանրապետության նախագահին ասեցի, խնդրեցի, որ գերակա շահ ճանաչեն»: Իսկ մի քանի օր հետո էլ (11 հունվարի 2012թ. «Առավոտի» կայք) հայտարարում է՝ «էր հողերը մեզ հիմա պետք չեն»: Դրանից օրեր առաջ էլ ասել էր՝ «Ոչ ոք չի կարող խափանել այդ հողերի՝ ընդերքօգտագործման նպատակով շահագործումը»: Տնօրենի խոսքերը կրկին հաստատում են, որ գերակա հանրային շահը՝ մատուցված կառավարության որոշման մեջ, գոյություն չունի ընդհանրապես: Դա բացառապես մեկ մարդու եւ նրա հովանավորների անձնական շահն է:

Ըստ էության Ձեզ ապակողմնորոշել են նաեւ գյուղում առկա անշարժ գույքի մասին տեղեկություններ հաղորդելիս: Իրականում, մինչդեռ, սեփականության իրավունքով գյուղում գրանցված է 123 միավոր անշարժ գույք, վարձակալական իրավունքով՝ 5 միավոր անշարժ գույք: Վերջին շրջանի իրադարձությունները ցույց են տալիս, որ կառավարությունը,

այնուամենայնիվ, չի պատրաստվում վերջնականապես լուծել հարցը, թեեւ երբեմն հուսադրող քայլերի պատրանք է ստեղծում: Գյուղի բնակիչները տպավորություն ունեն, որ կառավարությունը նման կիսաքայլերով ու երեւութականություն ստեղծելով խուսափում է բուն խնդրից եւ մեր գլխի տակ փափուկ բարձրում, քանի դեռ նախընտրական շրջան ենք ապրում: Իսկ այդպես մտածելու համար հիմքեր ունենք:

Ահավասիկ՝ 2011թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ փոխվարչապետի ստեղծած աշխատանքային խումբն այցելեց գյուղ, ուսումնասիրեց խնդիրը եւ առաջարկեց ՋՊՄԿ-ին՝ ներկայացնել արդյունահանման այլընտրանքային ուղիներ: Փոխվարչապետի հանձնաժողովի այդ առաջարկությունն առ այսօր թղթի վրա է մնացել: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մի քանի օր առաջ առաջարկություն ներկայացրեց ՀՀ վարչապետին՝ «Օրենքի ուժով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշումը», բայց կառավարությունը նորից քայլ չի ձեռնարկում:

Մի խումբ պատգամավորներ ս.թ. հունվարի 24-ին դիմեցին ՀՀ վարչապետին՝ կառավարության խնդրահարույց որոշումը չեղյալ հայտարարելու առաջարկությամբ: Վարչապետն էլ հունվարի 26-ին կառավարության նիստում հանձնարարեց ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարին՝ քննարկել պատգամավորական խմբակցության առաջարկը, բայց... Փետրվարի 2-ին նախարարը հանդիպեց խմբակցության անդամների հետ, եւ կրկին ոչ մի կոնկրետ քայլ... Ըստ մամուլում հայտնված տեղեկությունների՝ ՀՀ վարչապետը հայտարարել է, որ Քաջարան գյուղի իրավիճակն իրեն ճիշտ չեն ներկայացրել... Եվ դարձյալ՝ ոչ մի քայլ:

Քաջարան գյուղի վերաբերյալ կառավարության հայտնի որոշումը դատապարտող դիրքորոշում են հայտնել բազմաթիվ քաղաքական ուժեր, հասարակական եւ բնապահպանական կազմակերպություններ: Կրկին՝ ձայն բարբառ հանապաղ: Ս.թ. մարտի 3-ին Քաջարան քաղաք այցելած ՀՀ վարչապետից փորձեցինք ճշտել, թե այս ամենից հետո ինչ ճակատագիր է սպասվում մեր գյուղին: Տիգրան Սարգսյանը, սակայն, ոչ մի հուսադրող խոսք չասաց կառավարության որոշումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ: Նա ավելի շատ խոսեց այն մասին, թե ինչ պայմաններով պետք է գյուղը վերացվի ու ծառայեցվի հանքարդյունաբերությանը: Ի դեպ, 2011թ. սեպտեմբերից մինչեւ այժմ երկու անգամ Քաջարան քաղաք այցելած վարչապետը չբարեհաճեց գոնե մի քանի րոպեով մտնել Քաջարան գյուղ՝ Քաջարան քաղաքից 3 կմ հեռավորության վրա գտնվող, եւ դեռ առ դեռ գրուցել ամիսներ շարունակ անորոշության մեջ հայտնված գյուղացիների հետ:

Բոլոր այս փաստերը վկայում են, որ կառավարությունը չի պատրաստվում անվավեր ճանաչել հակասահմանադրական ու հակազգային այդ որոշումը: Հարգարժան պարոն Սարգսյան Մենք հավատում ենք Ձեզ, ինչի համար եւ հերթական անգամ ենք դիմում Ձեզ: Քաջարան գյուղական համայնքի անունից խնդրում եմ՝ վերացնել կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշումը եւ գործնական քայլերով նպաստել սահմանային Քաջարան գյուղի ամրապնդմանը: Եթե Դուք կրկին կոնկրետ քայլ չձեռնարկեք ու լռեք, ինչպես վարվեցիք մոտ 600 քաջարանցու՝ 2011թ. մայիսին հրաժարվեցիք հանրապետության, ապա վերջնականապես կնշանակի, որ Դուք կողմնակից եք Քաջարանի կոմբինատի ծախված սեփականատերերի՝ սահմանային մեր գյուղը վերացնելու իրեշավոր ծրագրին, ինչի համար մեծագույն ավստանք կապրի գյուղի բնակչությունը, իսկ գյուղում կշարունակվի խորանալ անորոշությունը՝ սկիզբ առած 2011թ. ապրիլի 28-ից հետո:

Հարգանքով՝ Ռաֆիկ Աթայան
Քաջարանի գյուղական համայնքի ղեկավար, 5 մարտի 2012թ.

Չորս տասնամյակ՝ շինարարությունում



Լուսավորող՝ Զ. Գևորգյան

Անապոլի Տոդորով

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻՇ

«Անցնելով իմ կառուցած շենքերի ու շինությունների կողքով եւ վերհիշելով յուրաքանչյուրի վրա կատարած աշխատանքը, կարծում եմ, որ իզուր չեմ շինարարի մասնագիտությունը ընտրել: Յուրաքանչյուր կառույց մի սիմֆոնիա է, իսկ շինարարի աշխատանքը՝ սիմֆոնիկ երաժշտություն: Շինարարությունը ղեկավարելը նման է սիմֆոնիկ նվագախմբի խմբավարությանը: Խմբավարի փայտիկի մի սխալ շարժումից կամ նվագողների հնչեցրած կեղծ հնչյուններից կատարվող կեղծ երաժշտություն: Նույն ձեռքով էլ՝ շինարարությունում է, որի ղեկավարությունն իրականացնողի սխալ հրահանգից կամ վարպետ շինարարի գործիքի մի սխալ շարժումից կատարվող անորակ շինարարություն: Տարբերությունը միայն այն է, որ երաժշտությունը նորից հնչեցնելով կարելի է շտկել սխալը, իսկ շինարարությունում սխալը դժվար է շտկել, որոշ դեպքերում էլ անհնար է խուսափել անդամների կորուստներից» – խորհրդածույց է գործիքի շինարար Անատոլի Տոդորովը, ով ճարտարագետի եւ նախագծողի չորս տասնամյակ ծանապարհ է անցել:

Չինծառայությունը խորհրդային բանակի շարքերում եւս հետաքրքրական է անցել: Մոտոհրած-գային դիվիզիայի հատուկ ինժեներական գումարտակում ջրասուզակահետախուզական դասակի հրամանատար էր: Իր ղեկավարած դասակի ջրասուզակների հետ կառուցել է Բուրյաթիայի Չիկոյ գետի վրա կառուցվող կամրջի հիմքերի ստորջրյա մասը, ստացել է «ջրասույզ վարպետի» կոչում:

Աշխատանքային ուղին սկսեց Ռոտամիի հեկերի համակարգում՝ հիդրոարտադրամասի վարիչ: Մեկ տարի չէր լրացել, երբ կուսակցության շրջկոմի որոշմամբ (ինչը հաճախ էր լինում խորհրդային ժամանակներում) ստանձնեց Շինուհայրի ռեռոնե կոչվեղենի գործարանի շինարարության գլխավոր ճարտարագետի պարտականությունը: Չորս տարի կառուցվեց գործարանը, եւ իր ասելով՝ աշխատանքային դպրոց էր դա իր համար: Եղավ հեռավոր գործուղումների մեջ, սարքավորումներ ներկրեց Մոսկվայից, հեռավոր այլ վայրերից: Երբ գործարանը շահագործվեց, առաջարկ ստացավ աշխատելու Մոսկվայում, բայց գալթակողթյանը դիմացավ, չցանկացավ հեռու վայրերում բախտ որոնել...

Բայց հետագայում նաեւ տիրելու առիթ ունեցավ Շինուհայրի գործարանի հետ կապված, – «Այս վերջին տարիներին մի անգամ եղա Շինուհայրում, գործարանը լրիվ քանդված եւ կիսաթափանցված տեսա, չորս տարի հեղույս առ հեղույս հավաքես, արտադրություն ստեղծես, հետո տեսնես ավերված, կարծում ես, հե՛շտ է, մնացել էր չորս պատը», – սրտի ցավով ասում է գրուցակիցս:

Ինչեւէ, աչքի անցկացնելով նրա կենսագրությունը, մի եզրակացության ես հանգում. որտեղ բարդ տեղանա է ղեղել, ձեռնարկությունը ուսքի կանգնեցնելու խնդիր ծագել՝ գործուղել են այնտեղ: Միսիանի եւ Գորիսի կուսշրջկոմների առաջին քարտուղարների պայմանավորվածության արդյունքում տեղափոխվում է Միսիան՝ «Գյուղից» տրեստի թիվ 20 շրջի մեքենայացված շարայուն (ՇՄՇ) որպես գլխավոր ինժեներ: Մի քայլված ձեռնարկություն էր, վեց-յոթ ամիս հետո ուսքի կանգնեց: Երեք տարի Միսիանի շրջանում շահագործվեցին բնակելի շենքեր, դպրոցներ, գյուղատնտեսական նշանակության կառույցներ՝ անասնապահական ֆերմաներ ու ոռոգման ցանցեր: Կառուցվեցին Գորիայք եւ Ծղուկ գյուղերը: Մի քանի շենքեր նախագծային թերություններով էին կառուցվել, անհրաժեշտ շտկումներ մտրեց նախագծերի մեջ, որ բացառվեն թերությունները, նաեւ Գորիայքում դրենաժային համակարգ է ներդրել: Հիշում է՝ մայիսի 1-ին Սպանդարյան գյուղում սկսեցին եւ նոր ուստարվա նախորդին ավարտեցին դպրոցական շենքի շինարարությունը, պատմում է, որ բեռնատարի թափքից երկաթբետոնյա կառուցվածքները վերցնում եւ անմիջապես տեղադրում էին կառուցվող շենքի վրա: Նաեւ հիշում է, դպրոցը վաղաժամկետ շահագործման հանձնելու համար երեք դրույքի չափով պարգե-հավելավճար է ստացել: «Առաջարկեցին ձեռնարկությունը

Շարունակությունը՝ էջ 8

Մեծարվեցին ազատամարտի մասնակիցները եւ զինվորական նվագախմբի դիրիժորը

Հայոց բանակի 20-ամյա հոբելյանը պատեհ առիթ է արժեւորելու նրա անցած ուղին, արժանին մատուցելու նրա կայացմանը նպաստած մարտիկներին, հիշատակի փոփոխությունները հայրենի սահմանների պաշտպանության մարտերում ընկածներին:



Փետրվարի 26-ին Կապանի Ա.Շիրվանզադեի անվան պետ-թատրոնում ՀՀ «Ազատամարտի վետերանների միություն» (ԱՎՄ) հասարակական կազմակերպության Սյունիքի մարզային կառույցը կազմակերպել էր երեկո՝ նվիրված հայոց բանակի 20-ամյա տարե-դարձին: Միջոցառումը վարող Ռու-զաննա Ավանեսյանը ներկայացրեց օրվա խորհուրդը, մերօրյա ազա-տամարտն ու նրա մարտիկների անցած ուղին: ԱՎՄ Սյունիքի մար-զային կառույցի ղեկավար Ռաֆիկ Տոնոյանը հուշանվերներ հանձնեց Արցախյան պատերազմում ընկած ազատամարտիկների ծնողներին ու հարազատներին, հուշանդամներ եւ պատվոգրեր՝ մերօրյա ազատամար-տի մասնակիցներին:

Երեկոն նաեւ այլ խորհուրդ ու-ներ. բեմահարթակում մանետրո Ֆելիքս Հայրապետյանի մեծադիր նկարն էր: Հավուր պատշաճի մե-ծարվեց ճշմարիտ մտավորակա-նը, երաժիշտը, մարդը, իր երկրի պարկեշտ քաղաքացին: 1967-ին երեւանի պետական կոնսերվատո-րիան ավարտելուց հետո գործուղ-վեց Կապան՝ աշխատելու նորաբաց երաժշտական ուսումնարանում: Դեկավարում էր կրթօջախի փողա-յին բաժինը, բայց ժամանակա-կիցները պատմում են, որ վարպե-տությանը էր հնչեցում համարյա բոլոր երաժշտական գործիքները՝ փողային թե լարային, լավ երգում էր, նաեւ արիաներ «Անուշ» օպերա-յից: Ստեղծները նրան «մարդ-նվա-գախումբ» էին անվանում, շուտով ստեղծեց փողային նվագախումբ, որ պատիվ բերեց ոչ միայն կրթ-օջախին, այլեւ Կապանին: Դժվար է պատկերացնել համաքաղաքային

մի տոնախմբություն, որից անմասն մնար փողային նվագախումբը: Նրա հնչեցրած քայլերգերը եւ տոնական մեղեդիները մնացել են շատ-շատե-րի հիշողության մեջ, մասնավոր «Իմ սիրտը լեռներում է» ներկայաց-ման համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտությունը: Իսկ հանդի-սավոր միստերի ժամանակ հնչեցում էր խորհրդային Հայաստանի, այնու-հետեւ անկախություն ձեռք բերած մեր հանրապետության օրհներգերը: Կադրային սպայի որդի էր, եւ նախախնամության կամոք, ինքն էլ զինվորական համագզեստ կրեց: 1993-ի հունվարին՝ Արցախյան պա-տերազմի օրերին, մանետրոն դիմեց թիվ 84029 զորամասի հրամանա-տարությանը՝ ղեկավարելու փողա-յին նվագախումբը: Հայաստանի հարավ-արեւելյան սահմանները պահպանող մարտիկներին միշտ այցելում էր զինվորական նվագա-խումբը, գոտեպնդում փողային երաժշտությանը: «Որտեղ՝ պատե-րազմ, այնտեղ՝ նվագախումբը», - սիրում էր կրկնել զորամասի հրա-մանատարը՝ զեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը: Նույն տարվա մայիսի 28-ին Հայաստա-նի առաջին հանրապետության օրը որոշեցին յուրովի նշել. պատերազ-մող Կապանում կազմակերպվեց զորահանդես, որի ոգին Ֆելիքս Հայ-րապետյանի ղեկավարած զինվորա-կան նվագախմբի հնչեցրած քայլեր-գերը եւ տոնական երաժշտությունն

Հորս փասնամյակ՝ շինարարությունում

Սկիզբ է 7

ղեկավարել, հրաժարվեցի, եւթյանը ինժեներ եմ, սիրում եմ, երբ առջեւ նախագիծ է փռված լինում, որ շինարարության որակն եմ հսկում, որ տեսնում եմ՝ նոր երկաթբետոնյա կառուցվածքն իր տեղն է գտնում շինության վրա», - ասում է շինարար Ալեքսանդր Մուրադյանը: Նոր տեխնիկայի եւ տեխնոլոգիա-յի ներդրման գծով ՇՄԸ-ն առաջին-ներից մեկն էր համակարգում:

ՄՊԸ-ի եւ Տաթևի ճոպանուղու մա-սին է, վերջինիս շինարարությունում հանդես է եկել որպես վերահսկիչ-գեղեցիկ:

...Շինարարության ոլորտում եւս բարձրորդի վիճակ է: Ով ինչպես ցանկանում է, կառուցում է՝ երբեմն անտեսելով ճարտարապետական նորմերը: Ինքնակամ, ապօրինի շենք-շինություններն աղավաղում են մեր բնակավայրերի ճարտարա-պետական դեմքը: Ի՞նչ կասի մեր զրուցակիցը հարազատ քաղաքի մասին. «Ճարտարապետությունը եւս եվրոպականացվում է, համա-ցանցից մի նախագիծ են քաշում, մի քանի ձեռնարկներ մտցնում մեջը, եւ այդպիսով հայկական շունչ ու ոգի չեն ստանում: Թեպետ այն կարծի-քին չեն, թե Գորիսի ճարտարապե-տական դեմքն այդքան աղավաղ-վել է: Մերոնք ձգտում են Սյունիքի ճարտարապետական ոգին պահպա-նել, երբ նորը կառուցում են, ձգտում են՝ հնի հետ «խոսի»: Վերջերս Գորիսում շահագործման հանձնվեց դատարանի շենքը: Երկար մտածե-ցինք, որ քաղաքի հրապարակի շեն-քերի հետ զոնե ներդաշնակություն կազմի: Եվ լավ էլ ստացվել է: Այդ շենքն իմ նախաձեռնից կառույցն է: Շենքն այնպես պիտի նախագծվի, որ նրա կողքով անցնելիս թվա, թե անշունչ է, սակայն այն պիտի շնչի, պետք է ասելու բան ունենա, եւ դա է շինարարի հաջողության գրավա-կանը»:

Աշխատանքային գործունեու-թյան հաջորդ հասցեները եղան Գորիսի «Միկրոշարժիչ» գործարա-նը, «Հայտրանսգազ» միավորման Գորիսի մագիստրալային գազա-մուղների գծային արտադրական վարչությունը, «Հայկոռաշին» տրեստի Գորիսի շինվարչությունը, «Գորիսշին» համաշինարարական պետական ձեռնարկությունը, որոն-ցում աշխատել է գլխավոր ճարտա-րագետ կամ շինարարական բաժնի ղեկավար: Բացի դրանից՝ ընդլայն-վել է նրա գործունեության աշխար-հագրությունը՝ ընդգրկելով Մեղ-րու, Կապանի, Գորիսի եւ Սիսիանի շրջանները, մի դեպքում ձգվել են գազատար խողովակներ, եւ կա-պույտ վառելիքը մտել է մարդկանց բնակարանները, այլ դեպքերում՝ շահագործվել են բնակելի շենքեր, սոցիալ-մշակութային օբյեկտներ, պաշտպանության նախարարության պատվերով՝ զորամուկներ, ամրաշի-նական կառույցներ: Հարազատ քա-ղաքի համար եւս մնայուն գործեր է արել. եղել է Գորիսի քաղաքապե-տարանի տարածքային զարգաց-ման, քաղաքաշինության, կունուալ տնտեսության եւ բարեկարգման բաժնի վարիչ՝ երեքուկես տարուց ավելի: Այդ ընթացքում միջազգային տարբեր կազմակերպությունների եւ համայնքի հետ համատեղ իրակա-նացվել են Գորիս քաղաքի տնամե-ծերի ոռոգման համակարգի, խմե-լու ջրի ներքին ցանցի նորացման, կուլտուր-կենցաղային օբյեկտների բարեկարգման, քաղաքային տնտե-սության տարբեր բնագավառի բա-րելավման ծրագրեր:

Երկարամյա շինարարը նաեւ նախագծային աշխատանքներով է զբաղվել: «Մոտ քսան տարի նախա-գծեր եմ արել: Դա մի տեսակ հոր-քի է եղել, նախագծել եմ կահույքի փոքր արտադրամաս՝ Երեւանում, Ստեփանակերտի գորգագործակա-նը, Արցախի խաչին գյուղի մոտակա ջրամբարից մինչեւ Մարտակերտ քաղաքն ընկած 24.5կմ երկարու-թյանը ջրատարի նախագիծն եմ արել, ռելիեֆային բարդ տարածքով էր անցնում ջրատարը: Հարդուքի շրջանի Առաքյուլ գյուղի համալիր կառուցապատման եւ գյուղով անց-նող հեղեղատարի նախագծի հա-մար ցանկանում էին վարձահատույց լինել, հրաժարվեցի, ասացի՝ Դարա-բաղի փեսա եմ, ոչինչ պետք չէ»:

Անատոլի Տոդորովը նաեւ օրի-նակելի ընտանիք ունի: Այստեղ է, որ ցանկանում ենք մի փոքրիկ գաղտնիք բացել: Ամռանը լրացնում է նրա ամուսնության 40-ամյակը: Կի-նը՝ ժամնա Մուսայելյանը, Արցախի Մարտունու շրջանի Սոս գյուղից է, ավարտել է Գորիսի մանկավարժա-կան ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: Ունեն երեք զավակ՝ որդի եւ երկու դուստր: Որդին՝ Աշո-տը, ճանաչված բժիշկ է Գորիսում: Ավարտել է Երեւանի Միխթար Հերա-ցու անվան պետական բժշկական համալսարանի բուժֆակը, այնու-հետեւ մասնագիտական ուսումը շարունակել Սանկտ-Պետերբուրգի ուռուցքաբանական կենտրոնի կլի-նոօրդինատուրայում՝ ստանալով ուռուցքաբան վիրաբույժ-ուրոլոգի որակավորում: Վերջինս ավարտելուց եւ ՀՀ զինված ուժերում երկու տարի ծառայելուց հետո այժմ աշխատում է Գորիսի բժշկական կենտրոնում՝ ուրոլոգ-վիրաբույժ, ունի որդի եւ դուստր: Երկու դուստրերից ավագն ավարտել է Երեւանի ճարտարագի-տական համալսարանը, այժմ բնակ-վում է ԱՄՆ-ի Օհայո նահանգում, կրտսեր դուստրն ավարտել է Գորիսի ճարտարագիտական համալսարանը՝ ճարտարագետ-էլեկտրոնիկի մաս-նագիտությանը:

Համեմատաբար վերջերս Սյու-նիքում գործարկված երկու կառույց-ներում եւս Ա.Տոդորովն իր մատնա-հետքերն է թողել. խոսքը «Լեռ-էքս»

Եվ վերջում անվանի շինարարին հարց ուղղեցի. արդյոք գնահատվե՞լ է չորս տասնամյակով չափվող շի-նարարի իր վաստակը. «Ո՛չ մի կերպ, թվում է՝ վաստակավոր շինարարի կոչում կտային, բայց չգիտե՞ս դարձ ինչպիսին է, - ասում է եւ կես-լուրջ, կես-կատակ ավելացնում, - համ էլ ազգային փոքրամասնության ներ-կայացուցիչ եմ»:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Այունյաց երկիր
 S U S T O R S U Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝
 ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Հեռախոս՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 06 28 02:
 Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՎԱԶՂ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագ-րությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՐՆՁԱՆԻ տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.03.2012թ.:

	Ճարիկ	Օճար ...			
			Ճարի մաս	Նոտա	
	Թշնամի	Էլ. սարք	Հայ երգչուհի		
				Չողանդ	Հանգ Թունո խմբից Թեն
	Գետ ՌԴ			Գետ Ֆրանսիա- թուն Բանջարաբույս	
				Մասնիկ	
Միդ	Պալար ցողուն				Բաժակաճառ
Սոխուկավոր կերպույս			Հին ոտնճան	100թ	Հին վրացական պետություն
			Հին հայկ. նոտա Կերակու- տեսակ		Հիվանդություն
			Օուկային կենդանի Թռչուն		... վիրապ
Գ. Սոնդուկյան «Գիշերա սարք ... է»	Գյուլ Սյունիցում			Գինու տեսակ Եվրոպի	Գոտնճար
					... կորտասար

ՀԱՂՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում եղիշե Կամոյի Ասրյանի /օրինակ/ վերջում Ասրյանի/ կողմից քաղաքացիական գործ է հարուցվել՝ Կամո Եղիշի Ասրյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին: Բոլոր այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Կամո Եղիշի Ասրյանի գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Կապան, Երկաթուղայինների 4, հեռախոս՝ /0285/ 5-22-66: